Երազում էի դառնալ դերասանուիի, գրադպել եմ մնջախաղով, բայց ստացվեց էնցես, որ անգերեն նասնագիտությունն ընտրեցի: Ստածում էի՝ գրական թարգմանություններ կամեմ, իսկ դերասանուիի դառնալ հա էլ կիացնեմ. այ մի հաս ռեժիսոր կտեսնի ինձ փողոցում, կմկարի կինոյում ու հոռ՝ երազանի կիրականանա: Ռեժիսորը տեսավ, առաջարկեց քատրոնում խաղալ, բայց խառը ժամանակներ էին ներսում ու դրսում, ու երազանիս մարտուսը տեղափոխեցի ամենօրյա ծանր աշխատանի գծի վրա, անգերենի մասնագիտությունն էլ ալտերնատիվ դարձավ թիվվածք թիվելուն ու Սադախլուից աղրանք բերելուն, որ ընտանիքով կարենան ալրել ցուրտումութի, անձնական կյանքի անհաջողությունների ու Հայաստանում ընդիհանրաբես գոյատելու դժվար տարիներին :

Գրական թարգմանություններ սկսեցի անել խան տարի հետո: Վերջերս ստացվել եմ «Արտգրակում» (2005/1):

Երեսունյոթ տարեկան եմ:

Սկսել եմ գրել Երեսունմեկում, թե՝ Երեսուներկուսում:

Ինձ տարածում ա դադիկիս ասածը՝ նոր ծնված ժամանակս ինձ լողացնելիս՝ խսան ա, խսան:

Ինձ սառացնում են Երևանյան ձմեռները:

Սիրած գովնն արդեն վաղուց կաղուցը չի:

Սիրած անում չունեմ:

Սիրած ուսելիք չունեմ:

Սեփս սիրում եմ անել, բայց չեմ անում:

Ասծուն հավատում եմ ու չեմ խաբում ոչ նրան, ոչ՝ ինձ, ինչ կամ՝ եղ եմ:

Մարդկանց կամ սիրում եմ կամ ոչ մի ձևի չեմ վերաբերվում: Կյանքիս առաջին կեսում առաջին զգացումս երգեիչում, էս, դայմանական ասած, երկրորդ կեսում՝ երկրորդը:

## Կրօնվեմ դայուսակիցս

Կրօնվեմ դայուսակիցս  
որ  
չընկնեմ  
կծամեմ ժրբներկս  
որ  
սոված չմնամ  
հայելիս կղահեմ  
որ  
հասկանամ՝  
ես ես ոչ թե ուրիշը  
կկղնեմ ծառին  
որ  
կարդան՝  
չի վաճառվում  
չի փոխանակվում  
վարձով չի տրվում  
հեռախոսի համար չկա  
դատարկ թերթիկներից  
մեկը դրված մարդն էլ  
թող  
չզանգի

## Լարից ընկած

Ես խոսում եմ աշխարհի հետ  
լարը փոթված հեռախոսով  
ու համր մարմինս ձգում եմ  
Երևանի փողոցներով  
հայացով հանդիդում եմ նարդկանց  
ու դատասխան չեմ ստանում  
թեև ուզում եմ գոնե աղմուկից  
մի ձայն բամել  
ոչինչ չի ստացվում  
ես կառնեի հաստա  
մի կարգին հեռախոս  
մի լավ աղարաս  
հմնադատասխանիչ ձենով  
ու ծայրահեղ դեմքում  
ինս ինձ կզանգեի  
ափսոս որ ես էլ ինձ  
ասելիք չունեմ  
ու փող չունեմ  
լավ աղարասի համար  
ցանկալի գրուցի համար  
դեմք ա վճարել  
ինս ինձ ցավերը

առաջ էլ գին չունեին  
իսկ հիմա ընդհանրապես  
ձի են թափած  
ու ավելի շատ են բան  
աղրանքը շուկայում  
ավելի էժան  
բան կիսամաս շորերը  
եվրոպայից բերած  
ՏԵՇ ասված էս  
ինչտան եմ հնացել:  
ոչինչ որ դեմիս  
հնության ՕՏԿ չկա տղած  
զատո ՕԳԳ-ն հեռվից «Երևան» ա  
ու հանկար մոտիկից դարձվում ա  
շատ չի  
կամ շատ ա էն ինչ վաղուց ՕԳԳ չի  
դեմք չի ուրախանալ  
ու ոչ էլ շատ լացել  
ավելի լավ ա աղբել  
միջին հանրահաւաքականով  
ու աչերի փայլով  
աչ չծակել  
կամ աչ փայլացնելու ի՞նչ տարիք ա  
հիմա  
ի՞նչ կարիք կա զգացնուներ աղբել  
չէ՞ որ ամեն ինչի համար  
դեմք ա վճարել  
իսկ ես վարդու ամբողջ փողու  
արյանս հետ եմ փոխել  
իսկ արյանս գինը շատ ա  
ընկել  
բայց ամեն դեղինում  
դեմք ա լինում գոնե  
մեկին մի բան ասել  
իսկ ինձ մնացել ա  
փոթված լարը հեռախոսի  
գոնե թեկուզ  
լսելու համար  
«լավ, հասկացան  
ամեն ինչ դարձ ա,  
հավես չկա,  
էլ մի սկսի»:

## Ռառուդը

կանգնած եմ բալկոնում  
ուղեղիս բջիջները  
իրար են խառնվում  
ես ուր են գնում  
ինձ չեն հասկանում.

**Շովիճար  
Չիլինգարյան**

- կիսփեմ մուսկվայի դռները
- կիասնեմ լեհաստան
- կիանդեմ ֆունդամենտերը
- կերգեմ սայաթ-նովա  
քրոջ աղջիկը
- լաց կըլնի
- գլուխս կօյի
- կանցնի
- ինձ հաց կտան ուտելու
- մի բաժակ էլ ջուր

## Ի՞նչ արժի թարմ կանաչին

Երեկ հաշվում էի  
ինչ արժի կյանքն  
մի բաժակ սուրճ առավոտյան  
500 դրամ տրամադրութիւնու  
օրական  
մի տուփ սիզարես  
օրը մի աման ճաւ  
եթե հասցնեմ թե չէ  
Երկու հաս բուտերուդ  
ամիսը 900 դրամ հեռախոսի վարձ  
բանի դեռ արմենթելը չի թանկացրել  
կյանքիս էդ հասվածը  
իսկ լրացը  
որ ամենաթանկն ա կյանիում  
բոլոր առումներով  
որ նույնիսկ փողով դժվար ա առնել  
ու դարսենա կուտակվում են  
տարիներով  
ինտերնետի՝ ամիսը  
վեց հազարը  
բայց հաստատ չեն հաշվել  
ինչքան ա իմ վրա նստում  
բանաստեղծություն գրելը  
ու մարդկանց հետ սփյուռք  
եթե բարևում են ինձ  
ու էդ ամեն ինչը իրականում  
էժան ա  
կարելի ա դարսենվ մեկից վեցնել  
ու վերադարձնել  
Տիրոջը  
կամ բաժանել աղբաներին  
ու այդուն դրծնել  
աղբելու  
դարտականությունից

## լվացի

թարմ, ոնց ես, ոնց չես  
ինչ կա-չկա, սնորհակալություն,  
կներես՝  
լվացից փոռում եմ դարանին  
որ չորանա-հավատեմ  
արդուկեմ,  
ծալեն-դնեմ դահարանի մեջ,  
հանեմ ու թարմ օգտագործեմ  
մյուս անգամ՝  
հանդիմելուց  
էս ա կյանքը  
Երբ սերը նշանակում ա  
ոչինչ  
կամ լվացի՝ ձմռանը  
գարնանը  
ամռանը

## Թուես-ես-սա չեմ

նա եմ  
որ  
վերմակը բառում է գլխին  
ու  
իմիկոսների  
գանգը  
փօրելով  
աղի  
լուծույթը խառնելով  
բարձին  
ստանում

թարձր որակի  
հատուկ տեսակի  
երեխ չկրկնվող  
աննման  
աննկարագրելի  
անդամնելի  
անարտահայտելի

անբռնելի  
անընթանելի  
չլսված  
չտեսնված

բննարկման  
չենթարկվող

Դատադրության  
շնասնվող  
բնադրատությանը  
անարժան՝

ընդամենը  
մի բանի  
ակնթարք  
ընդամենը  
մի բանի  
ռողեն  
ասում են  
կարող է  
ժամեր

և լող  
ու  
անցնող  
երազներ

## ՌԵԺԻՄ

առավելության արթնանալ այն երազից  
որտեղ հերթական անգամ  
մարդու եկել էր  
էս անգամ օհնելն էր ման գալիս  
(դայտոյի իմաստով)  
ու մի կողմում ինքն էր իր  
բոյ-բուսաթ-հանգիս  
դեմքով  
իսկ մյուս կողմում էլի ինքն էր  
հողի տակից ոտերն էին երևում  
ոնց որ վերմակի տակից.  
Էն իր չսիրած վերմակների որ  
ոտերը բոյի դասձառով չէին  
տեղապորվում:  
Երևի նրա համար  
որ նախորդ օրը  
ռողեն չէր մնացել  
որ չմասած  
ինչ դրզայով  
բնաբեր խմեն  
որ ինձ  
արթնացնող  
չինի:

Ըստել դիմումի մոտ  
կողմնել առաջին ծխախոտը  
ու արցունիքները աչքերից թափվելով

ինդրել օրիստոսին  
աղաչել Տեր Ասծուն  
որ էս անգամ էլ ների  
«էլ չեմ անի» ասելով  
ես գիտեմ որ սիրում ես ինձ  
գիտեմ որ շատ ես սիրում  
բայց ի՞նչ անեմ չեմ դիմանում:

Ըստել դատաճանուրի առաջ  
նվազել ճարդուս սիրած  
Շողենի երկրորդ նոկտյունը  
հիշել որ անգիր չեմ կարողանում  
նվազել  
բայց գոհանալ որ գոնե նոտաներով  
կարողանում եմ  
էնքան նվազել  
որ մատներիս  
հիշողությունը դահի նոտաները  
ու հույսը դնելով դրա վրա  
անցնել  
Բախի  
Ֆրանսիական սյուիսներին  
ընտել  
հետք երեք բեմով-դիեզից  
ավել չունեցող  
մենուտեներն ու  
սարաքանդաները  
մտածել որ էս  
երեխեն էլ կնվազի որ վիզ դնի  
ու նվազել, նվազել  
հանել Բախի  
դրեյվումեր ու ֆուգաներ կաղուս  
նոտաները  
ու նվազել երկրորդ դրեյվումը  
հատկապես ձախ ձեռը ինտենսիվ  
դարադելով  
որ սրշի ծակոցները անցնեն  
միացնել աջը  
որ արյանս ժաշանառությունը  
կարգավորվի  
մարմնիս կյանքը ընկնի ռիթմի մեջ:

նայել ժամացույցին  
հազնվել  
գնալ դասի:  
մարտուսնիում  
մտածել ոնց ձևակերպեմ  
դասմվածքը  
աչի ծերին դրզայող արցունիք մասին  
որ ուժ տա թափվի.

**Շովիճար  
Չիլինգարյան**

ինչքան թշվառություն կա  
տուցս նայելով  
ավտոյի տակ ընկած սաղ մնացած  
անդաւում կատվից սկսած  
մինչև անփող ծեր կինը որ  
տրանսպորտ ա նստում  
փող չունի վարորդին ասում ա  
ու արժանանում հայինամին  
ոնց որ թեն երեխս:

Երեխուն դասից վերցնել  
ուղարկել տուն  
մթամ դժի դասագիրք առնեմ  
գնալ հրամարակ ու Բնագրի  
բննարկումն էլ  
էդ կողմերում ա  
մտածել որ ճակարտագիր ա  
չնայած չէի ուզում հենց  
էս անգամ գնալ բննարկման  
հիշել որ ավելի լավ  
կակռազ հանգիս առանց  
մղկացող սղասումի  
կգնամ կմստեմ  
մաս դառած կյանի էդ անցուդարձին  
Մարինե Պետրոսյանի  
հոդվածի բննարկմանը:

մտնել ՆՓԱԿ-ի բննարկման սենյակ  
տեսնել ահազին ժողովուրդ  
ու ակտիվ բննարկում  
սեղանի վրա արևմտյան  
հայաստանի քարտեզ  
որովհետև խոսք հայ-թուրքական  
բնական  
հարաբերությունների  
Մարինեի Թուրքիայում ունեցած  
սղավորությունների  
սովորական թուրքերի  
անսովոր հայերի

կյանի դրոգրեսի  
ու ավանդականության  
իրար հետ յոլա գնալու  
հնարավորության  
խանգարող բաները բացահայտելու  
հաղթահարելու  
մասին ա:

բննարկումը վերջացնելուց հետո  
ոտքը կախ գցել  
սղասելով որ երկի գնանի  
կաֆե  
շարունակվի  
բայց մի ժիշ հիվանդ են  
չգիտեմ գնամ թե չգնամ.  
գնամ  
էղբան հիվանդ չեմ:

մտնել Փչակ կողի կաֆեն  
տեղավորվել համեմատաբար  
մեծ սեղանի շուրջ  
ծվարել մի ժիշ հեռու մարդ չվարակեմ  
դատրվակով  
թեյ-թխվածի դասվիրել  
ու ափս դեմքիս հենելով  
լուս մասնակցել աշխույժ գրուցին  
ամեն ինչի մասին  
ինչ խոսացվում ա:

Մարինեի հետ հասնել օղերայի  
կանգառ  
նստել մարտուսնի  
հասնել տուն  
ու մտածել մենակ մի բանի մասին  
որ երեխես կյանիում ասեն  
մամա  
ասեմ  
ներկա:

«- Իսկ ճի՞շ է, որ բոլոր լրագրողները երազում են վետ գրել,- հարցեց աղջիկը:

- Իհարկե ոչ,- ստեղի ես...»:

Դովլաթովի այս տողերը կարդալուց հետո՝ ոգևորվեցի, թե՞ դրանից առաջ արդեն ոգևորված էի- բայց գրել սկսել եմ սկզբում հենց այնպես, ինձ համար: Ինչ է սասցվել՝ դատի իմբները: Այս դասնվածները հրատարակելու համար ինձ ոգևորեց Վիոլետը, որին գործեր ուղարկել էի՝ ընդամենը մի խնդրագիր կցելով, թե՝ Վիոլետ ջան, սա գրականություն է, թե՞ ոչ: Եթե շատ վասն են, դադարեն գրել ու ազատ ժամանակս գրնե ուրիշ, ավելի օգտակար քանի վրա վասնեմ: Դիմա փաստուն ես և դուք Վիոլետի որոշման դաշտան ու հետևանքն եմ... Եվ այսուս, գնացինք... Ակզեռում իմ ամենասիրելի դասնվածը, հետո՝ ինչ- թես դատահի:

Մոռացա ասեմ՝ 27 տարեկան եմ, արդեն հասկացա՞վ լրագրող: Ինչողևս գրեցի այս դասնվածները՝ ես էլ եմ զարմացած, խանի որ ոչ ժամանակ ունեմ, ոչ էլ ցանկություն՝ դառնալ գրող: Բայց գրեցի: Կարունակեն, թե ոչ, ինս էլ չգիտեմ: Առաջիկայում ծրագրում եմ՝ ի- նել խելացի, տաղանդավոր, դառնալ հարուս, դրոֆեսիոնալ, ամուսնալ, ավարտել երկրորդ մասնագիտական կրթությունս, գրել թեկնածուական թեզ, մեկնել արտասահման՝ մի երեք տարվ սովորելու, գնալ Եվրոպա՝ մի երեք տարվ աշխատելու, բացել իմ production կենտրոնը, շատ ճանադարհորդել ու ֆիլմեր դատարանել: Այս ամենը՝ մինչև երեսունս լրանալը: Տեսնեմ:



## Արտակարգություն

# Աշխատանքային օրվա իմ հերոսները

10.00 AM: ՆՎԵՐԸ

Ես լեռը դեռ այստեղ է,- Արարատ ու-  
սումնասիրելով՝ ասաց Նվերը: Իմ խնճրագիրն  
այն եզակի դեկավաներից է, որը կատակում  
է անմկան: Կժմտան նրան, ովքեր լսել են, հե-  
րիք չեն, դեմք է նաև հասկանան: Աշխատան-  
քային առաջին օրվանից մինչև իհմա, երբ  
անցել է գրեթե կես տարի, նրա վարքը չի փոխ-  
վել: Մարդ, որ գիտ ինչու է աղբում, ինչին է  
հավատում, և որ ամենակարևորն է՝ հաշվար-  
կել է իր ժամանակը:

Այս, մի օր բոլորս էլ մեռնելու եմ, ոչ ո՛-  
հավերժ չեն,- աշխատանքային ինտերվիվ ու  
վեճի ամենաթունդ դահին ասում է նա: Ու  
վեճը: Սառը ցնցուի դես ազրում է բոլորին  
վրա՝ նրա աշխատակազմի, որ իհմնականում  
ջահել եմ, իմորվսիվ, զգացմունքային ու

անսկզբունքային մեր գործողություններում:

Նվերը բացարձիկ է իր հաշվարկներում:  
Նա կարողանում է ամեն ինչ գնահատել ոչ  
թե ամսով կամ տարվ, այլ՝ հենց ժամանա-  
կով, որի դրիմիշիկ բաժանումը վայրկաննե-  
րի, ժամերի կամ տարիների հնարել են նար-  
դիկ: Իմ կարծիքով նա աղբում է իր առան-  
ձին, ինմուռույն ու սեփական կենսաժամա-  
նակով:

Դու դժոխիվ ես գնալու,- ասում է նա, երբ  
հեգում, ծաղրում, բաճբասում, դժգոհում ես  
ինչ-որ մեկից: Նվերը կարողացավ մեր ա-  
շխատակազմի՝ կոհիվներով լի էներգիան  
դարձնել անհաղորդ, ենողիաների դրսուրու-  
մը՝ ամսեղի վարֆ: Ինձ երեմն թվում է, թե  
մենք եկեղեցականներ ենք: Դասել է այն աս-  
տիճանի, որ սեռերն էլ մի տեսակ միաձուլվել  
են. աշխատանքային գործընկերուիուս, որ-  
դես սեխուալ կին, չեմ ընկալում: Մրարա-  
նում տեսնեի, գուցե գինի հյուրասիրեի, հետո՝  
ծանոթանայի, հետո՝ ուղեկցեի, հետո՝ զան-  
գեի... Իսկ իհմա... Լիիթը համակարգչի մոտ  
հարևանությամբ նստած է՝ գեղեցիկ շրջա-  
զգեստով, թափական հայացնուում, կլորիկ կազմ-

**Արտակ  
Ալեքսանյան**  
**Աշխատանքային  
օրվա  
իմ հերոսները**

վածինվ. փորիկ, բայց հյութեղ կրծեր, մարզ-  
ված ոսեր ու ձիգ հետով գումարած խե-  
լացնոր երկար մարզեր... Ու գիտե՞մ ինչից ենի  
խոսում... բաղաբանությունից: Կամ ես եմ  
իմադուն դաշնում, կամ Նվերը անհասկա-  
նալի բիոլոգիական դաշտ է ստեղծել, երբ սե-  
ռական ցանկություններն աշխատանյա-  
կում բթանում են:

Բայց սա դեռ վերջը չէ:

Ուժեղներն ունեն դարտականություն-  
ներ, թույլեր՝ իրավունքներ, - սա ասաց, երբ  
ես փորձում էի ապացուցել, որ հանգսի  
իրավունք ունեմ, որ ևս մեկ անգամ վերջնա-  
կան թողարկումը ճշտելը նաև ինձանից  
ավելի շատ փող ստացող ու բարձր դաշտոն  
զբաղեցնողների գործն է: Ասում է՝ Եթե իրա-  
վունքներից ես խոսում, ունեմ թոյլ ես:  
Ասում է՝ ես հայր եմ, ունեմ դարտականու-  
թյուններ, դրատեր ունեն իրավունքներ:

- Why not?-, միտեւ արձագանքում է իր  
հավանած զարդարին:

Ընկերներից մեզը նրա մասին ասել է՝  
անբարոյականության չափ բարոյական է:  
Բարոյական է, համաձայն եմ, բայց՝ բռնա-  
դես: Երբեմն հասնում է դարձողիկ ասի-  
ժանի: Մեկին աշխատանից ազատում է,  
ընդ որում, չի տախու նախորդ ամսվա ա-  
շխատավարձը, մինչև նա իմբնական աշխա-  
տանից հեռանալու դիմում չգրի, կամ էլ՝ մեր  
խղճուկ աշխատավարձի կրկնակի չափով  
տուգանն է նշանակում փոր զանցանի հա-  
մար: Զուգարանում գրել է՝ «Դուրս գալուց  
առաջ ձեռքերը լվանալ»: Մի անգամ էլ գրել  
էր ինչ-որ դիտողություն՝ վերջում ավելացնե-  
լով «չ» որ մենք եկրողացիներ ենք, ոչ թե  
ասիացիներ»: Բարոյական է, բայց հաշ-  
վում է բռնադետության, մարդու իրավունք-  
ների ուսմահարման և խոսի ազատության  
սահմանափակման հետ: Ասում է՝ խոսի  
ազատություն երեք չի լինի, օրեւէսկի լրա-  
վությունն անհետարիիր է: Յա, և ամենա-  
կարևոր՝ լրատվությունը նրա համար ոչ թե  
հավասարակշռված է կամ համադրափակ,  
այլ՝ բարի կամ չար:

Ասվածավախ է: Մի ամբողջ օր տառա-  
դել էր և սզահար դեմքով բոլորին հաղորդում  
էր. «4850 տարի հետո տղամարդիկ աշխարհի  
երեսից կվերանան...»: Սա հաղորդում էր  
դեմքի ամենամտահոգ արտահայտությանը.  
«Տեղյակ ես վերջին նորությունից: Որքան եմ

ցնցված... 4850 տարի հետո...»: Մի բանի  
վայրկյան նայում էր դեմքիդ ու սկսում հար-  
ցուփորձ անել աշխատանից:

Ունի ավտոմեթենա, որ միտեւ անսարֆ է, և  
աշխատասենյակ, որ միտեւ կոկիկ է: Կարող է  
ենց համար սուրճ դարտասել, բայց ամեն  
անգամ սեփական դարակն է դմում իր բե-  
րած, բայց բոլորիս ընդհանուր օգտագործման  
միակ գործը: Բոն ջորնո,- ասում է ողջունե-  
լիս, չառ՝ հեռանալիս:

Բայց Նվերը միակը չէ իր իմբնատիլու-  
թյամբ... կամ խննթությամբ: Խննթեր մեր խմ-  
բագրությունը շատ է տեսել ու շատ էլ ունի...

#### 11.00 AM: STRANGERS

Տանկացած խմբագրությունում կան  
տարօրինակներ, որոնց մասին միտեւ կատա-  
կում են կամ սուրճի շուրջ խոսում «Են ցնդա-  
ծի» մասին: Մեր խմբագրությունն այդ առու-  
նով բացառություն է՝ այստեղ բոլորն են տա-  
րօրինակ: Առանց չափազանցության: Կա  
տասը լրագրող և տասն էլ շեղումներով: Վե-  
ցերեւ հոգեբանության մի գիրք էր ձեռքս ընկել: ՝  
Չինա դարձել է սեղանի գրույկս, ավելի  
ճիշտ, աշխատանիքին գրույկս: Այնտեղ բա-  
ռացիոնը նկարագրված են իմ գործնկեր-  
ներն ու իհարկե նաև ես՝ ներվայիններ, շի-  
զոֆրենիկներ, սանգվինիկներ, ոռնանահիկ-  
ներ... Բայց մեր տարօրինակությունը երևի  
դրոֆեսիոնալ դաշտաւոր ունի:

Տանկացած մասնագիտություն դա-  
հանցում է նյարդային բջիջների որոշակի  
զոհ: Բայց, կարծում եմ, նյարդային բջիջների  
զոհաբերությունը դարտադրի է համարվում  
թերևս միայն լրագրողների համար: Ես դեռ  
չեմ հանդիպել գրականության մեջ լրագրող-  
ներուի մի կերպարի, որի՝ եթե ոչ առանցքա-  
յին, աղա գոնե աչի ընկնող բնութագրիչնե-  
րից մեկը չիներ նյարդայնությունը: Այսդի-  
սով, լրագրողները ներվային մարդիկ են, ու  
դա նորմայ է, ու դա դարտադրի է:

Մանե՞՛ ձեզ օրինակ: 48 տարեկան է,  
իին ասացվածի նման՝ հետևից դատիկ, դի-  
մացից տափկ: Ծխում է օրը երկու տուփ սի-  
գարես, խմում 8-9 բաժակ սուրճ, ուտում է...  
ավելի ճիշտ ուսագնաց չինելու համար սն-  
վում է առավելագույնը մեկ անգամ, մեկ  
խաչարություն: Վերջին 20 տարում արտաքինը  
չի փոխվել, թեև դնդում է, որ այդուս է ծն-  
վել: Մանեն մեր խմբագրության ամենափոր-

ձառու և ամենախելացի լրագրողն է: Բայց ունի մեկ թերություն՝ ամեն ինչ կարծես «long play»-ով անի՝ դանդաաաաաաաա... Դանդաաա է կողմնորոշվում, դանդաա է գրում, դանդա ապա է արձագանքում, երբե չի նկատում նոր բաճկոնդ, ընկերութիների նոր սանրվածքը կամ նույնիսկ՝ նոր աշխատակցին: Բայց նկատելուց էլ երկար, դանդաա զննում է իր խոռոր, կարծես կիսաբնած աչքերով ու կասվի դես կիսաճայն ու թավշյա բասով նլավում. «Լիլիիիիի, այս կոստյումը հիասխանչ է ո՞յ կատարմածք»:

Սանեն սովորություն ունի՝ հարցագրուց վեցցնելուց առաջ միշտ ստուգում է ձայնագրիչը, ասում է՝ «մեկ, երկու, երեք», ինտ լսում նորմալ է ձայնագրել, թե ոչ: Մի անգամ միասին էին նույն ծառայողական մեթենայում: Մանեն ասում է՝ «մեկ, երկու, երեք»: Խետ լսում է՝ «չորս, հինգ, վեց»: Նորից է իրեն ձայնագրում. «մեկ, երկու, երեք», ու նորից ստուգում «չորս, հինգ, վեց»: Չուահասպած իման է դիմում.

- Աղաջուռում եմ, օգնիիր, այս տիմար ձայնագրիչը ինձ չիիի ենթարկվում,- ու մանրաճասն սկսում է դաշտել այն, ինչ առանց այդ էլ գիտեի: Ջէ որ նույն մեթենայում էին:

- Սովորաբար դու երիզ սկսում ես ձայնագրել նույն տեղին.- հարցնում եմ:

- Իհարկեն ոչ, սկիզբ եմ տալիիս՝ նո՞ր:

- Այդ դեղինում չի բացառվում, որ իին ձայնագրությունն է:

- Այսո, բայց չ՞ որ ցոյց է տալիս, թե ձայնագրուում է:

Իհարկե Մանեի ասածի մեջ կար տամարանություն: Ստուգեցի ձայնագրիչը, իետո՞ւ երիզը: Ու հասկացա: Հարցնում եմ՝

- Մանե, վերջին անգամ Ե՞ր ես երիզ փոխել:

- Իի՞նչ:

- Երիզ Ե՞ր ես փոխել: Չո հավերժ նույն երիզ չ՞նս օգտագործելու:

- Իսկ ինչի՞ն, լի՞ս էր փոխել:

- Իսկ ո՞ կարծինով՝ ո՞:

- Դեե, գիտես իինչ, սրամիս մի երևա: Երբ ես զնում էի ձայնագրիչը, ասացին, որ նրա անխափան աշխատանքը երաշխավորում են հիինգ տարի: Անցել է ընդամենը երեք տարի:

- Չա, Մանե ջամ, բայց բոլորը գիտեն, որ

երիզը արագ է մաշվում, հատկապես ամեն օր ձայնագրելուց: Դրա համար էլ ամեն ամիս փոխում են:

- Օօօօօ, իսկապեեեես: Ինչ ամողատե ստացվեց: Դիմա ես իի՞նչ ամեմ:

Ինչ դեմ է ամեր: Ուղիղ մեկ ժամ ըվարելուց հետո որուց փոխել երիզը ու ձայնագրել այս անգամ նույն երիզի մյուս երեսին: Դա էլ կծի մի երեք տարի, մինչև այս երեսն էլ աներեսի դես Մանեի «մեկ, երկու, երեք» չարտասամի «չորս, հինգ, վեց»:

Ի դեմ, Մանեն աղբում է մեկսենյականց բնակարանում նախկին ամուսնու հետ, որը գրականացես է: Ունեն մի դուստ: Ամուսնալուծվելուց հետո էլ միասին են աղբում, որովհետ չեն կողմնորոշվում՝ ինչորեւ բաժանել մեկսենյականց բնակարանը: Երբ մի անգամ դաշտում էր ամուսնուց բաժանվելու մասին, ասաց. «Օօօօ, չեես դասկերացնի, թե գրելու իմ ձանձրաաա ո՞ ուներ»:

Պատկերացնո՞ւմ եմ. ամուսինները բաժանվում են, որովհետ նրանցից մեկի գրելու ոճը ձանձրաա է: Եվս մեկ դաշտառ. «Ես օրինականացի նրա նասկինները չվաճանալու իմ իրավումը»:

Իմ գործընկերներին կարող եմ նկարագրել մեկ բաղով, նրանի բոլորն էլ, ինչորեւ անգիտացիներն են ասում «stranger» են: Սա չափազանց դիմուկ ու երկիմաս բառ է. մի կողմից նշանակում է՝ տարօրինակ, որը փաս է, և ու օսարական, այս դեղինում՝ իրենց շքաղատող աշխարհից ու իրականությունից:

Նամաց համեմատությամբ խիս երկրային են իմ ոչ-լրագրող ընկերները, օրինակ՝ Արթուրը, որի հետ ընդմիջմանը դեմ է ճաշեի, բայց ասաց, որ ժամարդկած է:

#### 01.00 PM: ԸՆԴՄԻԶՈՒՄ

Արթուրը 29 տարեկան է: Նրանց ընտանիւմ սովորաբար ամուսնանում են մինչև 30-ը: Վեցին ընկերութին, որին դատասպում էր առաջին հանրադեսության օր՝ մայիսի 28-ին, ամուսնանալու առաջարկ անել, հանդես եկավ սեփական առաջարկությամբ. «Ար բաժանվեմ: Ես ենց չեմ սիրում, արդեն հանդիպում են ուրիշի հետ: Ահա նա: Իսկ դու ինձ այլևս մի անհանգստացրու:» Արթուրը տառեղում էր երկու ամիս: Այցելում էր ողոնիկնե-

## Արտակ Ալեքսանյան

Աշխատանքային  
օրվա  
իմ հերոսները

Ին, խմում էր՝ ում հետ դատահի և ինչ դատահի: Մի անգամ էլ նույնիսկ մարդիուանա օգտագործեց: «Վայ, Վիկա, ես fn մերը, ես fn հերը... ինձ ուրեմն չես սիրում, հա՞... Վիկա, բայց դու գիտե՞ս ինչ կորցեցիր: Նա ենց կիսաբի, հետդ կինի ու հաջորդն օրը կրօնի: Վիկա, ես fn էստըննան մայրիկը, որ բող էր ու ենց էլ բող սարեց...»:

Երկու ամիս Վիկայի սպերի հետ կրվելուց հետո Արթուր գնաց աշխատանի: Աղամանդներ է վաճառում: Առաջին գործարք այն աղամանդով մատանին էր, որ դեմք է նվիրեր Վիկային: Նույնիսկ այդ ժամանակ չոփացավ ու գնորդին դատմեց իր սիրու դատանությունը՝ մեկժամանց մենախոսություն: Գնորդը, որ ինքն էլ էր դատաւասվում մատանին գնել նույն նորատակով՝ ընկերութուն նվիրելու և ամուսնության առաջարկ անելու համար, արդեն երկնում էր՝ գուցե Արթուրի դժբախտության դատարք հենց մատանին է: Արթուրը խոսացավ, որ եթե մերժում ստանա, մատանին հետ կվերցնի:

Մատանին չքերեցին, Արթուրն ասիհանաբար սկսեց նոր, դուռնոցիալ կին փնտել: Ծանոթացավ Զարայի հետ, ավելի ճիշճ՝ Զարայի: Բոխ դարապելու ժամանակ կոտրել էր դիմացի երկու ատամների կեսը և «օ»-ն արտասանում էր «ր» ու զին էր դրամից: Համոզված էր՝ այդուս ինքը, որ դրոֆտեխուսումնարանում սացել էր խառասի մասնագիտություն, իհմա իր «ր»-ով և Սերտենեսով ավելի կիրք ու ինտելիգենս տղավորություն է թողնում:

Զարայի մտին էլ կար ամուսնությունը: Երկու ժամ հեռախոսով զրուցելուց հետո որոշեցին հանդիմել ընդմիջման ժամին ու միասին «լանչ անել»...

... Մրցարանում մարդաւաքան էր: Զարան հիշեց, որ Փարիզում, անգամ ամենամարդաւաքան վայերում, աղմուկ չկա, բոլորը ըսուկով են զրուցում: Արթուրն ասաց, որ համաձայն չէ, Մոնկվայում խոսում են այնուս, ինչուս ցանկանում են, դարձալու այնտեղ երածությունն է բարձր: Զարան դնդեց, որ ըսուկով խոսում են ոչ միայն Փարիզում, այլև՝ ամբողջ Եվրոպայում: Արթուրը, որ Եւևանից, Եզմիածին-Սևան-Գառնի-Գեղարդից բացի եղել էր միայն Մոնկվայում, հասկացավ, որ այստեղ զրուցն ավարտվում է, ու որոշեց թեման փոխել:

- Զարա, դու կո՞յս ես:

- Այո:

- Իսկ ո՞ր ամսին ես ծնվել:

- Դուքիս:

- Բայց դա կույսի նշանը չի:

- Ես աւրով նկատի ունեի:

- Ո՞ր թվին ես ծնվել:

- 1979- ին:

- Զարա, դու կույս չես... դու ոչխար ես:

Արթուրն այդ դահին արդեն որոշել էր՝ չհանդիմել կույս-ոչխարի հետ: Զարան որոշել էր՝ չհանդիմել անատամների հետ:

- Կզանգեմ,- ասաց Արթուրը:

- Ցանկացած ժամի,- դատասխանեց

Զարան:

«Կզանգեմ, բա չէ», - մտածեց Արթուրը:

«Կպատասխանեմ, բա չէ», - մտածեց Զարան: Ի դեռ, դարձել էր, որ Զարան ստվերել է նույն դրոֆտեխուսումնարանում, ինչ Արթուրը, բայց՝ կարի բաժնում, թեև բոլորին ներկայանում էր որդես դիզայներ:

03:00 PM: ԴԱՐՁԵՐԻ ԱՐՎԵՍՏ

Լրագրողն առաջին հերթին գրում է դատմություններ: Ռաւ համար անհրաժեշտ է մարդ, որին դեմք է տալ անհրաժեշտ հարցեր: Իմ ընկերությունը Արմանը բացառիկ մարդ է այս ինաստով, որ լրագրող չի, բայց տախու է ամենահետաքրի հարցերը: Ընդ որում, նա հարցին հարցով այնուս է դատասխանում, որ մտածում ես, թե նա վաղօրեն նախադարասվել է, մինչդեռ դա ընդամենը նրա բնական ռեակցիան է:

Մի անգամ Արմանը կորել էր գրեթե երկու ամսով: Զեր դատասխանում հեռախոսագնացերին. բջջայինն անջատված էր, տանը միացած էր իննադարասխանիչը: Վերջադիմ նի եւևանյան օր նրան հանդիմեցի փողոցում:

- Ուզույն, Արման, էս ո՞ւր ես, չկաս:

- Ե՞րբ...

Անուսնանում է մեր ընդիանուր ընկերը՝ Էդգարը, որն արդեն երեք տարի ընկերություն էր անում Նվարդի հետ: Նախորդին հավաքվել էին Էդգարի «անուիական» վերջին թեժին: Բարձր տրամադրություն ունեին, խմել էին մի խանի շիշ օրի, վիսկի և գարեջու: Ցանկած աղմուկի միջից հնչեց Արմանի ծայնը.

- Մի ռողե, տղեր:

- Հա, ասա, Արման ջան,- մտածեցինք կենաց է ասում:
- Էղօար... իհմա դու ամուսնանում ե՞ս:
- Հա, Արման ջան:
- Ո՞ւմ հետ, աղետ...

Ամուսնանում է մեր երկրորդ ընկերը՝ Սամվելը: Կրկին նախօտեն վերջին «ամուսիական» հավաքն է: Խնջույքը հասել է իր գագաթնակետին: Հանկարծ աղմուկի միջից ձայն.

- Մի ռողե, տղեր:
- Արմանն էր: Բոլորս իհշեցինք «Էղօարի հարցը»:
- Լսում եմ, Արման,- հարցին դատրաս էր անգամ Սամվելը:
- Հիմա դու ամուսնանում ե՞ս,- այս ժամանակը ավանդույթ դարձեց Արմանը:
- Այո, ում հետ՝ Աննայի հետ,- կանխելով երկրորդ հարցը՝ դատասխանեց Սամվելը՝ իրենից գոհ:
- Ո՞ր Աննայի, աղետ:

Ես մի բան եմ հասկացել, որ լրագրողներն իրեն են դժվարանում հարցերին դատասխանել: Նոյն Արմանի հետ չեմ կարող զրուցել իմ աշխատանքային խնդիրների մասին: Զի ստացվում:

- Արա, դու էլի անտրամադիր ես, էս անգամ ի՞նչ է դատահել,- Արմանն է հարցնում:
- Ո՞նց ասեմ: Չեմ կարողանում աշխատել: Զետե՞րս ոնց որ թուլացած լինեն:

- Ինչի՞ն: Տանն ամեն ինչ նորմալ է:
- Հա, խնդիր չկա:
- Ընկերութուդ հետ ես կռվե՞լ:
- Չէ, էլի: Ձես հասկանա:
- Դե ասա: Աշխատանքից են ազատում, աշխատավարձ են կրատո՞ւմ:
- Չէ:
- Արա, քա էլ ինչի՞ն համար ես մանրո:
- Ո՞նց բացատենմ, երկրում տիրող մթնոլորտից...
  - Իիիի՞նչ:
  - Ասեցի, չէ՞ չես հասկանա:
  - Ես ասել եմ ու կատեմ: Լրագրողներու ցնդած եմ... Լավ, գնացինք գործերով:

#### 01:00 AM: ՕՐՎԱ ՎԵՐՋԸ

Մինչև ուս գիշեր աշխատելու առավելություններից մեկն էլ ծառայողական մեթնայով տուն վերադառնալն է: Հերթապահող վարորդը Գառնիկն է: Առաջին աշխատանքին օրը ինչո՞ր վեճից հետո, իհմա վախով է զրուցում յուրաքանչյուր լրագրողի հետ: Նա ելում է այն սկզբունքից, որ ամեն մի լրագրող գիշ է: Ու այս է զգուշանում մեզանից: Գրեթե հրաժարվում է մեզ հետ զրուցից:

- Գառնիկ, էսօր ամսի բանի՞ն է:
- 16-ը:
- Թե՞ 17-ը:
- Կոնկրետ չգիտեմ, Արտակ ջան...

IO-I4-ը հունիսի 2004 թ.

### Պատիկիս մառանը

Երբ 11 տարեկանում հասարակական բաղնիքի դրան անցից հետևում են լողացող մերկ կանանց, թեզ դեռ որ հասակակիցները կիասկանան: Երբ 16 տարեկանում գրաղվում են օնանիզմով, հավատացած են, որ եթե աշխարհը թեզ հույսել է, ուրեմն բոլոր 16 տարեկանների ճակատագիրն այդ է: Երբ 18 տարեկանում հավաքած ողջ փողոք վասնում են մի դոռնկուհու վրա, որը թեզանից մեծ է 30 տարվ, և իր միակ հաճախորդները թեզ դեմ արբունի մեջ գտնվող տասնութենրն են, ելի չես բարույթավորվում: Բայց երբ 23 տարեկանում հանկարծ ու մի սիրահարվում են, թվում է, թե աշխարհի վերջն է: Որովհետև են համոզված էին, որ սերը հենց այնուեն չի գալիս. դեմք է մի լավ նախադարձասվես, կազմդադարձաս լինեն բոլոր տեսակի անախորժությունների և նույնիսկ սիրանինների: Թե չէ՝ Մանեն ինձ սիրում է բանաստեղծություններ կարդամ: Պոեզիա: Դատկադես Շենութիր: Դուք կաթում եք դրանից մեր հարաբերությունները կփոխվե՞ն: Ավելի շա՞տ կսիրեմ, թե՞ դակաս:

Դիմացի բարձրահարկ ժենի Արթուրը, գիտեմ, որ մի խանի տարի առաջ Մանեին սիրահետք է: Խանիցից կմեռնեմ, եթե նրա հետ չզրուցեմ: Ոչ նրա համար, որ իմանամ, թե ինչ հարաբերություն է ունեցել, այլ դարձադես նրա անդամակառ մռութը մի լավ օր դիմի փշեի: Արթուրի դաշտառով, որի հետ տասը տարի նոյն դասարանում իիչ չէ, նոյն շարժում էին նստում, որովհետև երկուսս էլ բարձրահասակ էին, դեռ երկուսին ազգանունն էլ նույնն էր, անունն էլ, ես հայսնվել եմ անհասկանալի գուգահետների և համեմատությունների մեջ. այ, տես, էն Արթուրը ինչ արեց, իսկ դո՞ւ: Արթուրը 100 մետր վազեց 13-ում, իսկ դու նորմատիվային 14-ն էլ չես կարդանում աղահովել, Արթուրը երեք օլիմպիադայի ոսկե մեդալակիր է, իսկ դու շարադրության

հանրաղետական մրցույթը բաց թողեցիր, որովհետև բնած էր մնացել: Սեզ, գիտե՞մ, ինչ-որ էին տարբերում՝ Արթուր դարձեցն ու Արթուր խովհանը: Դժվար չէ կրահել, թե ով է դարձեցը, իսկ ով՝ մյուսը: Իսկ իհնա ես սիրում եմ մեկին, որը մերժել է «Արթուր իդեալականին», «Արթուր գեղեցիկին», «ընկերության հոգուն», մի խոսնվ, ինչուն ասում են մեր դասարանի աղջիկները՝ ՆՐԱՆ: Ու զնուել է ինձ: Մանեն սիրում է ԻՆՉ: Բայց մի ժամանական է Մանեն իմ կողովին: Ներել եմ անգամ, որ անցած տարի Արթուրի հետ մի խանի գիշեր անցկացրել է նրա ամառանոցում: Նախադարձարմունքներն ու բանբասմներն ինձ չեն հետարքում:

Բայց Մանեն տխուր է: Վերջին անգամ մի ամիս առաջ ենթ դիսկլուսեկ գնացել: Ի՞նչ անեմ. նոր եմ սկսում փող աշխատել: Ասում են՝ Արթուրի հետ ամեն օր էր գնում: Մանեն իիչ առաջ ասաց, որ ես Արթուրի «մերժած սիրությունուցումն» եմ մանրադրանով»: Ոչ ավել, ոչ դակաս: Այսինքն՝ չէ, ավել կա: Որ աղբատությունս անգամ համբուրվելուց է զգացվում, աղբաս եմ ու ժլաս: Ծովյ եմ ու դանդալոս: Տգեղ ու... Վայ, ես դրա...

Ի՞նչ անեմ: Ի՞նչ անեմ, որ Մանեն ուրախան: Երկի աշխարհի ամենաղժվար բանը աղջիկներին ուրախացնելն է՝ փող աշխատելուց էլ դժվար: Կատակներս անհամ են սացվում, անեկողոս դամելուց ինն էլ զոռով են ժղոսում, բայց կանգ առնել չեմ կարողանում, ոնց որ մեկը բզի՝ անեկողոս դամի, հա, դամի: Աղբատությունը ճարդունակ էլ է դարձնում, հարուստների իմբնավասահությունը սրամության գրավական է, թե՞ նրանց կատակների վրա կեղծավորությունից են ծիծաղում: Տղաներ կան՝ առանց ջամ թափելու աղջիկներին ծիծաղեցնում են: Մրան դեռ բերանները չքացած՝ աղջիկները թրջում են, դեռ միմնոստությունը չավարտած՝ աղջիկները ոււաթափվում են: Բայց ես կատակելու իմ ձևն ունեմ: Ու տեղը: Դա-հա, հա-հա-հա, տեղը: Կատակում եմ, դուռը փակում-գնում: Ավելի ծիւս՝ գալիս: Գալիս եմ ձեր անհամ աշխարհը: Բայց ԱՅՆՏԵՇ՝ իմ կատակավայրում, լավ ծիծաղում եմ, հա-հա, հա-հա-հա, բա չէ: Որովհետև իմ կատակները իսկական են, բարձր մակարդակով: Մայրս ասում էր՝ հիվանդություն է դա: Ասում էր՝ նյարդայնա-

նալուց մոլագարի դես հարձակվում ու խեղդում եմ ինձ ցավ դատարառողին: Ու հետո ոչինչ չեմ իիւում: Ո՞նց չեմ իիւում, ի՞նչ նյարդայնանալ, ի՞նչ բան... Ոչինչ, թող այդղես կարծի: Իմ կատակմերը առանձնահատուկ են, շատերի համար՝ անհասկանալի, դրա համար էլ գաղտնի եմ անում, չեմ հրաղարակում: Մյուսների նման մեծամիտ չեմ, որ ամեն, իբր թե, սրանության վրա ուսադրություն հրավիրեմ, չէ, ես գլուխօգովան չեմ: Միայն ափսոս, որ անգամ այն հնարավոր, հատուկենու հասկացողմերի համար էլ անմաշչելի են իմ կատակմերը: Կատակում եմ մեկուսի, ինս ինձ համար: Մեկ էլ՝ կատակմերիս օբյեկտների, օրինակ, առաջին սիրու՝ Արմինեի, իիմա նաև՝ Մանեի...»

Նրա դիակը դեռ թարմ է: Լավ է, որ դադիկի մառանը կա: Ոստիկանները, մինչնույն է, ոչինչ չեն գտնելու, ինչողևս փորձեցին ու այդղես էլ զգտան Արմինեին, Աննային, Թերեզային, Ալիդային, Ջրիսինեին, Շահանեին, Էմիրային, Քերմինեին, Նունեին, Գոհարին, Նարինեին, Զառային, Վարդուհուն, Սյուզիին, Կարինեին, Ղերինազին, Ղերինեին, Մարիամին, ի՞նչ էր էն ուսանողուհու անունը... հա՝ Անահիտին, Ուկիին, Արուակիին, Նուշիկին... Մանեն 23-րդն էր: Ես էլ 23 եմ: Գուցե հերի՞ է մեկ տարվա համար: Լավ, տեսնեմ, թե էս ուսուցչուի Տանյայի հետ ինչ է սացվում, դրանից հետո կորուսման...»

*29-ը մայիսի 2001 թ.*

## Պարտիվ մուրճն ու հարևանը

(Մի սղանության նախերգան)

Երկինքը կարծես խոնավ լարի դես այսօր բանվում է:

Անձրւը կամ, ինչողես օդերևութարաններն են անվանում, տեղումները հոգիարագաս կարող են լինել ցանկացած մարդու, սակայն՝ մեկ վերադահումով: Անձրւը լավատեսների համար չէ: Մեկ էլ՝ ոչ դրագմահիկների: Երբ հազուսդ ամբողջությամբ թքվում է, գրեիկ է մտածել, թե վաղը կիհվանդանաս: Երբ անձրևանցի տակ դաստիարակած գրանում են՝ միայնակ կամ երկուսով, ոտերիդ խոնավության համար դեմք է մտահոգվես առնվազն տանը: Անձրւելու ժամանակ լրացրու դլաններ կազմելը, տիկնիկի մասին մտածելը դժվար հաջողվի: Անձրւը մտերը ժողովելու ժամանակ է: Այն բնության ամենահետարքի ու դժուառու տարերն է: Անձրւը հենց այնուես չի լինում, թե չէ՝ ծառերը ծաղկելու փոխարեն կիսելին, առանային տերումներից հետո ձյուն չէ գա: Քետարքիր է, որ անձրւը միշտ ոգեշնչել է դուեներին ու նկարչներին: Անձրւն է մեզ սիլում զգալ,

որ դեռ այստեղ են, չեն կորել: Չեն փախել կամ անհետացել:

Հարևանն նորից տանիքն է նորոգում ու անիծում անձրւն ու թացը: Անցած տարի, երբ նոր էի տեղափոխվել մայրաբաղավ, փորձեցի ընդդիմանալ նրան, դատմում էի անձրւի իմ ընկալման, զգացողությունների նասին: Մինչև իհմա կարծում է, թե կատակում էի կամ ծաղրում: Քոզմել եմ նրանից. այս սեզոնին էլ չեմ հանդուրժելու ֆավորիտ-եղանակիս հասցեին ոչ մի անարգան: Եթե այսօր ևս շարունակի՝ կսղանեմ: Իսկը անցած տարվա դես: Սղանեցի հարևանիս, որը նոյնույն անձրւ չէր սիրում: Տեղափոխվեցի մայրաբաղավ: Կսղանեմ ու կփոխեմ բնակավայրս: Մեր երկիրը մեծ է ու հյուրընկալ: Կաղրեմ այնտեղ, ուր անձրւ սիրում են ու հասկանում են դուեներին: Կամ էլ հարևաններիս տանիքը նոր կլինի, ու «հաղորդակցվելու» առիթ չեն տա...

Այդ աղուուր դեռ շարունակում է: Զարմանում եմ, ինչողևս կարեի է միաժամանակ հայինել ու մուրճով տանիքն ամրացնել: Սուրճն, ի դեռ, ես եմ սվել: Չուներ: Երբ վերադանի, այդ ժամանակ էլ կսղանեմ:

Եհ, ի՞նչ էի ասում: Անձրւն իրով ռոմանիկների եղանակ է, համաձայն չե՞մ: Լավ մտածե՞մ:

*21-ը մայիսի 2001 թ.*



Վիոլետ Գրիգորյան

Առաջ իմ գրածները շատերն էին հավանում, հիմա՝ չչերը: Բայց երևի դիսկ չանեմ էնողես գրել, որ ոչ մեկին դուր չգա:

Ծանոթներիս մեկը դամում էր «մանդալայի զոհաբերության» մասին, երբ բոլոր դայական վաճականները գումավոր ավազահատիկներով հսկայական գործ են «հյուսում», աղա բոլորով միասին փշում-ավերում են իրենց ահռելի աշխատանքի արդյունք, որ խորհրդանում է ամենայն ինչի անցողիկությունը: Յայ-ֆրիստոնյայի համար բոլորովին անհականալի բան, բանի որ նա միշտ «հավերժական» ու «մնայումն» է գնահատում (մանավանդ արվեստի մեջ): Այսօրվա աշխարհի մեծ մասը՝ երկնաերեւով, միտքերանավերով, բարձր տեխնոլոգիաներով, կլոնավորումով, արվեստով ու գրականությամբ, ֆրիստոնեական մշակույթի և հայաբակրության՝ երկրի վրա դիզան գանձերն են:

Դյուսել բառերով գործ (խոսք որակի մասին չի, այլ՝ գործողության մեխանիզմի) ու փշել-ավերել՝ երբեք երևի երան դիսկ չեմ ունենա: Այս արածին բանաստեղծությունը կարող է գրել ու գրել շարունակ, իսկ չչիորել ու բզբգել՝ դատարան փայփայելով, որ երբեք չափաբեր մի դահ կարող է նմանվել փշել-ավերելուն, բայց հանդեսի համար հասցնելու անհրաժեշտությունը գրահիս վեցակետ դրեց: Փաստե՞ն ես էլ հայ-ֆրիստոնյա եմ:

Յարգելի ընթերցող, հետևյալ գործակուուկը լրտեղուց հետո ձեր դատասխանը կարող եք համեմատել հեղինակի տարբերակի հետ (վեցում թարս տղված): Յամընկնան դեղուում դուք կարժանանաք «Յարեմի վարդ» մրցանակին, լրտեման այլ տարբերակները կարող եք ուղարկել violet@freenet.am հասցեով կամ դարձադեսք բերել ՆՓԱԿ: Լավագույն դատասխանները կտագրվեն մեր հանդեսում: Յաջողություն ձեզ:

7 կույս նոյց + 7 գդալ + 7 դատանի + 7 զոյգ կրումկ + 7 դառավ + 7 բերան + 7 այրի =

## Յարեմի վարդ

*Դու իմ միակը՝ ձևակարագրով,  
Ես նո նաևներուրը՝ թյուրինացարսար...*

Յոթը կույս նոյց մորութավոր կաթսայի շուրջ բոլորակի դրսվում են, յոթը գդալ չխկչխկացնում ու խառնում են թանձրուկը տաֆ, սոսնձային, աղա կոշչում այդ տարառվ՝ իրև նազիսի, դրկուում են (վախ, նամա ջան) աղվաճագերն իմ նարմնի, յոթ զոյգ ձեռքեր, յոթը ոլոր բելօղակներ դրտելով էրիլատոր, ժոկչիսկալեն դրանկում են արմատախիլ, մազագերծում-դլոլացնում անութներս ու ցայլս խուժում...

Պատրաստում են ինձ գիշերվա ժիրոջ համար:

Յոթ դատանի անամործի (բայց աչերով, ախ, աչերով թաց ու նվադ ո՞նց են սիրում, ո՞նց են գգվում), կոմացորով լոկ ծածկոռիկ (մարմնանասե՞ր հիացնողիկ), կավե խուռ տաշակի մեջ յոթ զոյգ բորիկ կրումկներով տոնիկ-տոնիկ տրորում են վարդաթերթեր յոթույնանի, ու բժժած ու նվադում, վարդաթույրի ուսայնի մեջ խճճված ու թմրածեմուկ, հոյլ դանդաղուկ շարժումներով, վարդայուղի կաթիլներով լվանում են (ո՞խ, նամա ջան) թևատակեր, ծնկածալեր ֆրզնուկ...

### Պատրաստում են ինձ գիշերվա ժիրոց համար:

Յոթը դառավ՝ առանց ատամ, որ բերանով նուրբ սիրելու գիտակներ են հմուտառութ, միշտում են մատներս տաք շիլախյուսի մեջ հինայի, ծալաղատիկ տուրջ նստում, երգ են ասում, ծափ են տալիս ու օրորվում, ծափ են տալիս, օրորվում են, երգ են ասում, օրորվում են, երգ են ասում, ծափ են տա... տա... Տաք մատներս՝ տասը օձեր, գալարվելով փարաթվում են մարմզնիս տուրջ և հինայի կարմիր հետքեր գծում մեջքիս, ազդրերիս ու ստինմերիս՝ համաց մուրակի հետագծեր, որ այրում են զոլզոլակի... Ու սրտիկիս աղաղակը լեղաճափիկ (ջո՞ն, մամա ջան), երբ սափորից թափանցիկը թափվում է հա մեղրակաթիկ (տուրիս մոտիկ մոտեցողիկ դադուղակի, բայց անցողիկ, բայց հեղանցիկ հոսողակի ու անցողիկ, ախ, անցողիկ վաղվաղակի) ու չի դիմում լեզվիս ծայրին, մոտենում եմ հեռանում է, ձգմգվում եմ՝ խույս է տալիս, ախ, մի կում ջուր, գոնե՝ կաթիլ հաս երկու օ... Մատներս ասես տաք լավայե ձեռնոցներում տաս մեղրաղարս, և լիզում է (ականջը՝ խույս) ժեյրանը հուր, կրակակու լեզվով բարբար ջահանամի փայաբաժն ֆալանգներս մասնիքազարդ... Կայ, արթնացրին (նմանի է), ինձ արթնացրեց լրությունը հանկարծակի, էլ չեն երգում, ծափ չեն տալիս ու օրորվում դառավները, լրու լիզում են ու մարում են մատներս ալ հինայինիկ, բոստորկ ու կարմոնիկ, երկայնակի կլումներով ազահոնիկ ու հիմնուկ լրատում են հաշիկ-հաշիկ...

### Պատրաստում են ինձ գիշերվա ժիրոց համար:

Յոթը տարի այր չտեսած յոթը այրի, որ ամուսին ոչ թե հողում, այլ մտիում են թաղել միայն (փազզլի դես կտոր-կտոր հավաքելով մարմնանասե՞ն իննազորիկ դայթեցրած մետրոներից ու ժեմերից), իրենց թոռվ ու արցունիով խմոր հունցում ու խում են արմունկներիս ու հոդերիս, սրորում ու փափկացնում են կրունկներս կլորակի, ձիթայուղով ու թուրիմջի կեղևներով, անանուսի ժերսներով ճըմքռում են մաշկս ամրող, վարդի յուղ են խում ննջուն երակներիս ու գրքում այրուս կիր ու նոլությանը և բուրավես նույն ու խեժով սանրում են ձիգ մազերս նամ ու հյուսում են բառուն ճյուղ ծամ, որ բարձրացնի բառուն անգամ, բառուն կանգուն ցանկությունը սիրո ժեյխիս... Ու փայլվլուն ուկիններով ու զնզգնզան ուկուններով ու խչւան մետախսներով գարդարում են մարմինս նոր՝ արևելի ժերմինատոր (ամբողջովին գույն են ու բույր, զնզգնզոց են ու տողտողամբ և ցայտափյուտ ու ցոլացիր էղիկենտրոն են՝ իգորյան մշուներում իննադարուց)... Ու բուրավես շամանների հետ մեջնեց դարսդարսաւար ըղարշմերն են բերում յոթքոյն ու ժերս առ ժերս ու ծալ առ ծալ փաթաթում են ինձ յոթը տակ, դարուրում են, դիրկ բարուրում, խողան ծածկում ու թագնում՝ բոժոժի դես խոստումնալից- տակավին գոց, գուստ երաշխիք ու փակ ծրարիկ ուսեղօծ, վայելվատու գալունարու ծոց... Ախ, բանային ո՞ւմ ձեռիմ է (յեռ չեմ տեսել դեմքը ժիրոց), երբ կմանի փականիս մեջ ու կրացի ինձ իմ առջև (ներսի կողմից սիրս է թակում), որ ներս անցնեմ իմս իմ ժեմից, գտնեմ իրեն... Նա, ով գիշի կողը ծածուկ, կրացի այս հանգույցը խույս ու փուլ առ փուլ ու տող առ տող, անդուկ, անդող կլութի մութ ռեբուսը իմ գլուխկոտրուկ...

Պատրաս են ես, ահա, մտիկ, համառ գալանիի ծայրեծայր գոց, վերիվար փակ, մունջ ուսնջոց, համր աղաղակ... միայն աչերս են անծածկոց (և աչերով, ախ, աչերով թաց ու նվազ ո՞նց են սիրում, ո՞նց են գգվում): Այս կողմ նայիր, խալիներին, մութաբաներ ու բարձերի արաններում, հաճկատար ու սրտաշիկ, հանց տիեկին՝ հուրախություն (ինչուս նոցա՝ եղևնու տակ, գուղաններում) դրված ընծա՝ անակնկալ ու փայլվլուն, դտուս-դտուս կիր փաթաթուկ ըղարշմերով յոթնակիտուկ (իր բերթերի մեջ թանված վարդի միջուկ), որ կրացի սղասարկու՝ հենց մո-

## Վիոլետ Գրիգորյան

Դաւթմի վարդ

տեսա, կամաց հղվի գիշերվա Տերն իմ ահարկու...

Բազմիր գահիդ, իմ փաղիքահ, ծոցիս ժահիդ, գոգիս փառա, ժահինչահն ես այս գիշերվա, ախ, ճաշալլահ... Իմ մեծ դարն, իմ նահաղես, վարդակրն իմ վարդաղես, բալնիքաղահ գոր բանտաղես, իմ ջանի ջահ, վարդի վարդես... Շեզարոն, սակավաղես՝ արտօնյալն եմ fn կանանցից, խանի մեջ ընորհընկալ եմ արտահերթ, հյուրընկալեմ տաղավարում իմ մարմնակերս, ինձ հետ խաղա, սրիս աղա...

Թիթեւների, բգեզիկի ու մեղվի հետ դախսկըպոցի խաղ խաղացող վարդի նման, թամնվել եմ ինս իմ մեջ, ով ինձ գտնի, հետ չի փնտի ուրիշ ոչինչ... Աչսախուփիկ դե լուսվիր, տուրջողուրո դե թռվա, խոստումներդ մեծ-մեծ թվիր, ոսկիներդ սփոփր վրաս, գոլվու արա՝ կերկերաձայն ու ծործորուն, սիրուն-սորուն, համով-դանով բառուբանով, որ ես բացեմ սիրով-կամով սիրու տուփիկն իմ տոչորուն, որ նիրհում է կեսորուն-արթուն, ափիոնի բույրով արթուն կուսության վարդմ՝ իմնահմա, ինմնայոյութ ու ինմնօրորուն...

Կանգմիր այդտեղ՝ ձեռիդ սրիդ, գլխահակ ու ոտարորիկ,

Ցուցանատդ թրջիր լեզվով, թերթիր մեկ-մեկ սրիդ դավթարն ու ծլվա դերձաբարբառ,

մի բեյթ ասա իմ աչերի փայլի մասին,  
մի բեյթ ասա իմ անթերի ձայնի մասին,  
մի բեյթ ասա իմ մազերի սաթի մասին,  
մի բեյթ ասա մաւկիս ծերմակ կաթի մասին,  
մի բեյթ ասա ցրումներիս համի մասին,  
մի բեյթ ասա կրծիս տամանների մասին,  
մի բեյթ ասա իմ լալազար դորի մասին,  
մի բեյթ ասա եշիսց զարկված ծորիդ մասին,

ասա բառ-բառ, ասա բեյթ-բեյթ, ովունաւար բառացերթ, գոալ-գդալ ցրունահար՝ կերակրիր խոսիր ցերեթ, ողկույզ-ողկույզ fn բառերով ականջասույզ, fn բառերով գիլա-գիլա, կերակրիր խոյր ցիրա... Սեղմիր դրմոր fn խոսիամուլ ու խոսացիր, Ժիր խոսացիր, Տաֆունով իմ ինքնաեն հիացնողիկ, հարացնողիկ ներքողներով լորձաւողիկ ինձ ողոնիր, ինձ խողխողիր տողիկ-տողիկ... Որ կատաղ տաղիկների հորձանութում, այինքնում խաղիկների, հնչյուններում գալար-գալար ու բառերի բեկրեկաւար դարձարձութում fn ցենցողիկ ես կլողամ տողիկ-տողիկ, ընչակտուր, սրադողիկ...

Թերթիր էջ-էջ սրիդ դավթարն ու մեջեմեջ դարսդարսաւար իին բառերի փուշին փշիր դու մերթընմերթ, սրիթ ցերս-ցերս, կարտա թերթ-թերթ... Գիշերվա ցեյս, սիրու իմամ, ասա՝ սալան, բացվիր, Սամ-սամ... Ամեն բառը մի բանալի հնարալի, ու կրացվեն դարսաւակամ ու սիրալիր, հնժար ու Ժիր դարմասները fn վասալի...

Գիշերվա դես, ինձ ման արի ու ինձ ձարի, ինձ որոնիր ու ինձ դեղիր, փաթույթ-փաթույթ, ցերտիկ-ցերտիկ, դրձուկիր իմ թերթիկերը փերթիկ-փերթիկ, մինչև գտնես միջուկի մեջ բանաթափուց մարմնս, որ դարտասել եմ սիրու սատար մեծ յոթնյակը ու վսահված անձին սիրու: Ու, ուս արա, ծարավ եմ ես գտնվելու, կամ

կապույս փեսւ,

(չէ, չգտար, այդտեղ չեմ ես)

դեղին փեսւ,

(այդտեղ էլ չեմ, ո՞ւ եմ, տեսնես)

կանաչ փեսւ,

(եթե գտնես, իմ անձիկը՝ անձիդ փեսեմ)

կարմիր փեսւ,

(ախ, ուս արա, վառվում եմ ես)

ճերմակ փես,  
 (չեմ դիմանում, արդեն թաց եմ ու նվազում)  
 սեփ-սև փես,  
 ճանոււակա... ծիկ, այսեղ եմ,  
 ահա և ես,  
 դու ինձ գտար, իմ բախտավոր, իին ովհտավոր,  
 ես ճամփա եմ, դու՝ ոտավոր,  
 ես՝ սիրային ոտանավոր, դու՝ կարդավոր,  
 ո՛հ տակ տու ինձ ծայրեծայր, ո՞վ անցավոր, ինձ գոց արա, անգիր ասա խա-  
 լերիս տեղն, երակներիս բարեզը բիլ՝ ծործորաձայն ու հանգավոր...

Տեսե՛, տեսե՛, թայց սա ինչ է, հանգեր կան, բառեր՝ չէ, ծործոր կա, իսկ ծայ-  
 րը՝ չէ, կարդացը կա, իսկ վորը՝ չէ, ոտեր կան, և ովհտը կա, և բախտը կա, ավորը՝ չէ,  
 ախ, ավոր չկա որ չէ...

Այս, ո՞ւ ես դու, Շամս ու Լուսին, աներևոյթ իմ ամուսին, իինա արդեն իմ  
 հերթն է, հա՞ գտնելու ենք, որ մերը նոդեր տեսանկում ես այս տողերում՝ այս ճաֆ-  
 ֆած հայելու մեջ՝ կտոր-կտոր ու բեկրեկում ու կես առ կես: Ինչ ճարդիկ ես դու  
 տախկըլել, ինչ մազալու, մասմասվել ես, ցրիվ եկել այս եցերում՝ մաս-մաս ու  
 լուռ... Ծունկս գետին տամ ու չորեմ, այս տողերը մի լավ լորեմ, կտոր-կտոր, հատված-  
 հատված, հավաքեմ ու մարմնամասեր մասնատված, հավաքեմ ենք փշուր-փշուր,  
 դժեղ-դժեղ, ամենեցում ի լու՛ հնչեղ, հավաքեմ ենք հնչոյթ-վերջույթ, մակդիր-  
 նախդիր՝ այս շարույթից, իմնավարույթ այս ասույթից՝ ձիւս ու լրիվ ու անխժիր...

Թայց չեմ կարում ենք հայթայթեմ, բացահայտեմ, ոտուգրուսդ կարկատեմ, ի մի  
 բերեմ ու դարտակեմ: Դու կիսվելով, կիսկսվելով բազմանում ես ու շատանում,  
 ամեն մասդ կյանք է առնում ու դու դառնում, ու որ մասդի էլ հանդիդեմ, ամուսինն  
 է իմ բազմադեմ... Այրի եմ ես բազմանուսին, որ մեկի հետ դավաճանում եմ մյու-  
 սին, մեր գլխիդ հետ եմ ժնանում, մեր՝ սրումիդ, մեր՝ շրումիդ, մեր՝ կրումիդ,  
 մեր ժնանում եմ խմբային, խոտորակի, երբ մասերդ մերձենում են ինձ միասին բո-  
 լորակի...

Սոնեցիր ինձ, իմ հոգմակի,  
 Տավ մատներդ՝ տասը օձեր, փաթաթվում են իրանիս տուրց ու դաղում են զոլ-  
 գոլակի... Սեղմիր, խեղիր, ցայտարյուրից ու սերմնացիր տասը կաթիլ իսիս ու կծու  
 թունավոր դեղ գեղիր իմ մեջ, հեղիր արյունս կուսական՝ խալիներին, մութաֆաներ  
 ու բարձերին, շղարծների վրա յոթգույն... Ամեն կաթիլ այդ արյունից, իմ արգանդից  
 զավակատու կելմեն՝ ասես զորացերք, երկվորյակներ՝ աղջիկ-տղա, զատ-զատ ու  
 ծոլու, ալլահատու զինամբերի, ատամիս տակ արտազաք թույն (մահու շերեթ), շաս  
 ավելի բաժան ու անթեր, բան թե բարե երկվորյակներն՝ թուլ, անձնատուր... Զեն վեր-  
 ջանա, չեն ավարտվի, բանի դեռ կամ՝ երիկներուն վիրուսացիր ու մահապիյուտ,  
 ես կծնեմ յոթը յոթ դորս, համավոր սորս, կամավոր ճորտ... Ես կգրեմ դերձաբար-  
 բար իմ դալամով գեներատոր, և էջ առ էջ ու տառ առ տառ, մեջնեջ ու հաշիատա-  
 ար սրիս դավթարն հասոր-հասոր... Ու կադր առ կադր հարակատար այս սերիալում  
 փյունիկաբար միշտ կրսնեն երկվորյակներ՝ մեռնող-հառնող տերմինատոր... Դար  
 կծնվեն կույս արյունից իմ վարդագույն՝ ալ մելամով գրված բառ-գույժ՝ փակ ծրա-  
 րում իմնաղարույր, երկվորյակներն իմ վարակիչ, ախտահարույց- հանար գաղտ-  
 նիք, վերիվար փակ, ծայրեծայր գոց, միայն աչերով անծածկոց նրանի կայրեն ու  
 կավերեն կանաչ դիմ աշխարհն ամբողջ՝ զզվելի խոց, նրան կզան զուգածին ու  
 թուիս-թուիս, արհեստական ու խարուսիկ վարդերով բակն այս կշնչեն՝ հանց ալ-  
 լահի աջով խառնած ու ավերած փազզով-մատրիս:

Ալլահ աբրա:



## **Տաղ անաւարտ՝ ի վերայ կլիտորիսոյ**

(վասն հանդէսի «Ինֆնագրոյ»)

Ծի, ծի, ծիկս,  
դստըլիկ խլպիկս,  
ձայնազուրկ ու թիկս,  
անլեզու ծլվիկս,  
գեղազանգուր ցիկս,  
ամենակով բկիկս,  
վարդաշրումն որցիկս,  
անլուսամուս խցիկս,  
թոթովխոս ճտոշիկս,  
խորոշիկ վսվշիկս,  
ջրիկ ու կչկչիկս,  
գլուխօդվան փչիկս,  
չար, խաղացկուն բալիկս,  
մշտականգուն ֆալիկս,  
խարտիչածամ փափլիկս,  
գլխիդ տուած բամփլիկս,  
ծափ-ծափիկ ափլիկիկս,  
տափը մտած խաբլիկս,  
մերթ անթրած ու մերթ էլ  
բնբըլահան սափիկս,  
սափրազլուխ տափիկս,  
անբարբառ տրունիկս,  
վարդավառ վարդունչիկս,  
հարսնաբար լուռ-մունջիկս,  
ներս գցող ու դնջիկս,  
սիրտը դրդ տրտունջիկս,  
ճոխ տրուճախ ու լունջիկս,  
խունջիկ-մունջիկ փունջիկս,  
սարի լալայ, սմբուլս,  
բաղի բալայ, բլուլս,  
ճնճուղի թև, թռիկս,  
հսկին թռվոյիկս,  
սասմա խն ու ծռիկս,  
բազմածն դմ, ֆռիկս,  
վառման հնոց փռիկս,  
անմար բոց ու ժրիկս,  
ճոճուան ու ճռիկս,  
աղունիկ աղուտրիկս,  
սրտիկ դաղլորիկս,  
բաջ զավակ, Տալորիկս,  
կարմրատոնիկ լորիկս,  
լորիկս, ոլորիկս...

Եսեղ մերս զանգեց, ասեց՝ այ, բալա, հե՞ր Ամերիկայից հետ էկար, մե ժիշ էլ  
մնայիր, գրին-քարտ կտանայիր, գոնե գործում իր, փող իր դրկում, մե ձև աղրում ինն  
խոր: Յիմա, էն ա, կայծի վարձը, ջրի վարձը չեմնանում ոնց ենք տալու, թե էդ ան-

## Վիոլետ Գրիգորյան

Տաղ անաւարչ՝ ի  
վերայ կլիսորիսոյ

Տե՛ր ջրաչափը հեր զռով դմել սվին, ախտերդ էլ չի բաշարում էս տեղացիների նման մազմիս ա, ինչ ա, դնի, անտեր սլավը գազանի լես վազում ա, բարամ, ձմեռն էլ էկավ՝ էս գազի վարձը որդի՞ց տանի, է՛, որը ասեմ... Են օրը, որ ուներ Թեթրանից դուս դրեցինք, էկանի էս խաճախը, բաղրախս էկանի- գնացինք, ես չիմ ուզում գայիմ, էն Վըրդնգոյլ՝ թեզ զնացած մեծնամեր էր թումբանը փետերն ընկի, քերը դեսպանատան դուն առաջ էր բնում, որ մեր տունը բանդի, բիշարա անի, Սերոն էլ դեսպանին տաս հազար թուման սվեց՝ յանի մայր հայրենիքին օգնություն, հետ էկանի ըստել, իմացանի՝ էդ կոչվում ա կաշառ... Պարսիկ հարևանին իհցո՞ւմ ես՝ աղայե Մեթրզափին, էն որ տի՞ Զամիի ծեռը կծել իր, միսը դոկել իր, ասում էր՝ աղայե Խաչիկ, խանումն Անի, ունա քար Էքքեբահի միհոնին թե Շորավի միրին, թեւկարի թե դարհայե Վորուդի ոռ քազ քարդե, անա ռույե դարհայե խորուցիչ դոֆլ գոզաքեն, նեմիթունն թեւկարե խուրի քածե, բարա ջում... բայց ո՞ւմ ես ասում, աղայե Խաչիկն ու Վըրդնգոյլ մերը վայրով ին էլի, ես չիմ ուզում գայիմ, խանում ին, էկամ ըստե, էկամ ընկերուիկ, էկամ ժիրա, առաջին անգամ լսացին, կարմրեցին, լավ ա, դարսկերեն չեն ինանում... Ժուժու ջան, իհցո՞ւմ ես, փոքր ժամանակ թեզ ըսենց ինի ասում, մե քան եմ ուզում ասեմ, բայց խոր չջղայնանաս, Էլմիրան էկավ, ասեց՝ տամ կախակաղետառան փող տախս ախկաս մարդ, ինվալիդ մարդ, Ժուժու ջան, ես էլ, դաստեր էլ ինվալիդ ենք, թող էքամ օգնություն խնդրեմ, ախտ աչերդ խանփյութերի առաջ բռացրեցիր, էլի փող չես աշխատում, մեղի ես, մենք ին վզին թավան չե՞նի... Գոռզոռացի, հեռախոսը շորտեցի:

...աղունիկ աղուրիկս,  
սրիկդ դաղուրիկս,  
քաջ զավակ, Տալուրիկս,  
կարմրատոնիկ լորիկս,  
լորիկս, ոլորիկս,  
կլորիկ, ճլորիկս,  
ըլոր ու սալորիկս...

Չէ, էլ չիլում, բանս լիկ իջավ, էսօր՝ աղբոյ, ողբծ, ֆինիս, թամամ, վերջ...  
**Բայց սա վերջն է առաջին համարի:**

րեմազ 1 39 5419 inknagir@arminco.com www.inknagir.am

